ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՈՒՐԱՐՏՈՒ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Կարևորելով ֆուտբոլի շարունակական զարգացումը, պրակտիկ հետազոտությունների համատեղ իրականացումը և արդյունքների ներդրումը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության.

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը պրակտիկ համատեղ հետազոտություններ իրականացնել ֆուտբոլի զարգացման, ուսանողների պրակտիկաների կազմակերպման, համատեղ գիտական միջոցառումների և սեմինարների կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում «Ուրարտու ֆուտբոլային ակումբ» ՀԿ-ն «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամին ներկայացնում է ֆուտբոլի մարզիչների դասավանդման և շարունակական զարգացման հետ կապված խնդիրները:

2.2 «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետականն ինստիտուտ» հիմնադրամը պատրաստակամ է ընդունելու այդ խնդիրները և գիտական հենքի հիման վրա ձևավորել մագիստրոսական թեզերի, ատենախոսությունների և այլ գիտագործնական աշխատանքների թեմաներ՝ մասնագիտացված ամբիոններում:

2.3 «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը պատրաստակամ է պրակտիկ թեմաները առաջարկել ուսանողներին՝

ամբիոններում և տեղերում հետազոտություններ իրականացնելու, իսկ «Ուրարտու ֆուտբոլային ակումբ» ՀԿ-ն պատրաստակամ է հետազոտություն իրականացնող ուսանողներին գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել՝ տրամադրելով «Ուրարտու ֆուտբոլային ակումբ» ՀԿ-ին պատկանող ենթակառուցվածքներում առկա ֆուտբոլի խաղադաշտերը, մարզասրահները /ֆուտզալ/, հնարավորություն տալ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետականն ինստիտուտ» հիմնադրամի դասախոսական անձնակազմին մասնակցել «Ուրարտու ֆուտբոլային ակումբ» ՀԿ–ի կողմից անցկացվող սեմինարներին:

2.4 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.4.1 նորարարական ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.4.2 գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման ոլորտում,

2.4.3 սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, մարզաբազաների, տարածքների, գույքի օգտագործման շուրջ,

2.4.4 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման ոլորտում,

2.4.5 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու շուրջ,

2.4.6 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները կատարվում են փոխադարձ համաձայնությամբ և համարվում են հուշագրի անբաժանելի մաս:

4.3 Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս Կողմին:

4.5 Հուշագիրը դադարեցնելու դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն, որպեսզի արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և պատշաճ ավարտվեն:

4.6 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2020 թվականի դեկտեմբերի 10-ին, երկու բնօրինակով: Երկու օրինակներն էլ հավասարազոր են:

4.7 Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Ուրարտու ֆուտբոլային ակումբ» Մարզական հասարակական կազմակերպություն
Q. Երևան, Ալեք Մանուկյան 11	Q.Երևան, Ջիվանու 2
ռեկտորի ժ/պ՝ Դավիթ Խիթարյան	գլխավոր տնօրեն՝ Հրաչիկ Աղաբեկյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.